

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԻՆԵ ԱԼՔԵՐՏԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

**ԽՐԱԽՈՒՄԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ-
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

**Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Չուբարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Շ. Պարոնյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Տ. Միքայելյան

Առաջատար կազմակերպություն՝ Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. սեպտեմբերի 10-ին ժամը 11:00-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. օգոստոսի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ. պրոֆեսոր՝



Ե. Լ. Երզնկյան

Խրախոսական նշանակությամբ խոսողական ակտերը դասվում են արտահայտչական խոսողական ակտերի շարքին, քանի որ առանձնանում են արտահայտչականությամբ, հուզական երանգավորումով և արտահայտում են խոսողի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գնահատականը:

Խրախոսական նշանակությամբ խոսողական ակտերի նպատակն է խոսակցին մղել որոշակի գործողության կատարման՝ վերջինիս ստիպելով ընկալել խոսողի մտադրությունը: Այս խոսողական ակտերի առանձնահատկությունն այն է, որ դրանք պերլոկուտիվ արդյունք ունեցող կանխամտածված նշանակությամբ կարծրատիպային և ոչ կարծրատիպային ասույթներ են, որոնցում առկա են խոսքային վարքագծի տարրեր: Դրանք հիմնական հաղորդակցական գործառույթը քաղաքավարության ծիսական ակտի միջոցով խոսակցին ոգևորելն ու խրախուսելն է: Այդ ասույթներն ունեն միասնական հաղորդակցական նպատակ՝ առաջ բերել խոսակցի (հասցեատիրոջ) դրական արձագանքը խոսողի (հասցեագրողի) նկատմամբ:

Խրախոսական նշանակությամբ խոսողական ակտերը դրսևորվում են երկու մակարդակներում՝ խոսքային և ոչ խոսքային:

Աշխատանքում լեզվական երևույթներն ուսումնասիրվում և նկարագրվում են գործաբանության տեսանկյունից՝ որպես խոսողի՝ իր հաղորդակցական նպատակներին հասնելու գործիք:

Ուսումնասիրության **առարկան** խրախոսական դիսկուրսն է իր նվազագույն տարրերով՝ խոսողական ակտերով, ինչպես նաև խրախոսական իրադրությունում խոսողի հաղորդակցական մտադրությունը՝ ուղղորդված պերլոկուտիվ ազդեցությամբ, և այդ մտադրությունն իրացնող խոսքային ու ոչ խոսքային միավորների իմաստագործաբանական, բառային-շարահյուսական բնութագիրը:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ խրախոսանքը և նրա դերը կարևորվում են մարդկային տարբեր փոխհարաբերություններում, և անհրաժեշտություն է առաջանում վերլուծել նրա արտահայտման միջոցները լեզվում: Ատենախոսության արդիականությունը բացատրվում է լեզվագործաբանության ոլորտում իլլուկուտիվ խոսողական ակտերի շարժառիթների և հաղորդակցական նպատակների նկարագրության և պերլոկուտիվ ազդեցության հետազոտման կարևորմամբ: Խոսողական ակտերի նկարագրությունը կոնկրետ նպատակային իմաստով այն խնդիրներից է, որոնք լեզվաբանության զարգացման ժամանակակից փուլում արդիական են դիսկուրսի, խոսողական ակտերի տեսության, լեզվագործաբանության վերլուծության տեսանկյունից¹:

Խոսքային գործունեության հաջող իրականացումը դիտվում է որպես խոս-

¹ Остин Дж. Л. Слово как действие // Новое в зарубежной лингвистике. Вып. 17 М.: Прогресс, 1986; Պարոնյան Շ. Լեզվաձանաչողություն և դիսկուրս, ԵՊՀ հրատ., Երևան, 2011; Сусов И. П. Лингвистическая прагматика. М.: Восток-Запад, 2006; Сепир Э. Избранные труды по языкознанию и культурологии. М.: Прогресс, 2001; Yule G. Pragmatics. Oxford: Oxford University Press, 1996; Wierzbicka A. Cross-cultural Pragmatics: The Semantics of Human Interaction. Berlin, New York: Mouton de Gruyter, 1991; Cutting J. Pragmatics and Discourse. London and New York: Routledge, 2002; Paronyan Sh. Pragmatics. Yerevan: Asoghik Press, 2012.

ընկերների խոսքային, ճանաչողական և սոցիալ-հոգեբանական փոխազդեցության արդյունք խոսքի գիտակցական կառավարման միասնական դաշտում: Խոսքային փոխներգործության գործաբանական հայեցակերպի ուսումնասիրությունը հետազոտական նոր ուղիներ է բացում՝ խոսակիցների լեզվագիտակցական փոխըմբռնման, խոսքի արդյունավետության բարձրացման, հաղորդակցական կոնֆլիկտների հաղթահարման առումով: Թեմայի արդիականությունը բացատրվում է նաև անգլերենը որպես օտար լեզու դասավանդելու հաղորդակցական նպատակներով: Դրանք ենթադրում են խոսողի խոսքային մտադրությունների նկարագրություն, որն իրագործվում է գրուցակիցների խոսքային փոխազդեցության ժամանակ լեզվական տարբեր միջոցների գործադրմամբ:

Աշխատանքի **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ փորձ է արվում վերլուծել խրախուսական դիսկուրսի գործաբանական առանձնահատկություններն անգլերենում, առաջին անգամ է կատարվում խրախուսական նշանակությամբ խոսողական ակտերի համակողմանի ուսումնասիրությունն անգլերեն լեզվական նյութի հիման վրա: Խրախուսանք արտահայտող խոսողական ակտերը դիտարկվում են որպես արտահայտչական և վարվելակարգային խոսողական ակտեր, որտեղ առկա են գնահատողական տարրեր: Դրանք ուսումնասիրվում են իմաստային, գործաբանական, հաղորդակցական, ինչպես նաև բառային ու շարահյուսական հայեցակերպերի համադրմամբ:

Աշխատանքի **նպատակն** է վերլուծել խրախուսական դիսկուրսը, բացահայտել, թե ինչպես է խրախուսանքը դրսևորվում խոսքում, ինչ խոսքային և ոչ խոսքային արտահայտման ձևեր են կիրառում հաղորդակցության մասնակիցները խրախուսանքի դեպքում: Ատենախոսության մեջ նպատակ կա նաև կատարել այդ միջոցների իմաստային-գործաբանական, բառային-շարահյուսական վերլուծություն, խրախուսանքի հաղորդակցական մտադրության նկարագրություն՝ նրա նվազագույն միավորը հանդիսացող խոսողական ակտերում, որոնք իրականացնում են տվյալ մտադրությունը անգլերեն խոսքում: Գրական ստեղծագործություններից քաղված համապատասխան օրինակների վերլուծության հիման վրա ուսումնասիրվում են խրախուսման իլլոկուցիայի և հասցեատիրոջ արձագանքի արտահայտման հաղորդակցական ռազմավարություններն ու մարտավարությունները:

Այս նպատակների իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. քննարկել խրախուսական դիսկուրսը լեզվաբանական տեսանկյունից,
2. ուսումնասիրել խրախուսական դիսկուրսի գնահատողական հայեցակերպը,
3. ուսումնասիրել քաղաքավարության կարգի գործառությունը հաղորդակիցների խոսքային փոխազդեցության ժամանակ և բացահայտել խրախուսական դիսկուրսում քաղաքավարության սկզբունքի ազդեցությունը լեզվական միջոցների ընտրության վրա,
4. քննել խրախուսական դիսկուրսի իմաստային-գործաբանական դաշտը,
5. պարզել գործաբանական և սոցիալ-հոգեբանական այն գործոնները, որոնք նպաստում են հաղորդակցության հաջող իրականացմանը, և վեր-

լուծել խրախուսական դիսկուրսը հաղորդակցվողների սոցիալ-հոգեբանական և հաղորդակցական դերերի տեսանկյունից,

6. իմաստագործաբանության դիրքերից քննության առնել խոսողի հաղորդակցական մտադրությունը խրախուսական իրադրությունում,
7. վեր հանել խրախուսանք արտահայտող կադապարների տիպերը խրախուսական դիսկուրսում,
8. ուսումնասիրել և վերլուծել խրախուսանքի արտահայտման ձևերն անգլերենում (գովաբանություն, շողոքորթություն),
9. քննել խրախուսական նշանակությամբ խոսողական ակտերի (բուն գովեստ, բուն շողոքորթություն, հաճոյախոսություն, հիացմունք, հավանություն, կենաց, շնորհավորանք) լեզվական առանձնահատկությունները:

Հետազոտության **մեթոդաբանական հիմքը** կազմել են դիսկուրսի, խոսողական ակտերի տեսությունները և գործաբանական լեզվաբանության դրույթները: Վերլուծությունն իրականացվել է քաղաքավարության սկզբունքի հաշվառմամբ²: Ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է լեզվագործաբանական վերլուծության մեթոդի կիրառմամբ, որը հնարավորություն է տալիս երկխոսական միավորների նմուշները քննել իլլոկուտիվ և պերլոկուտիվ մակարդակներում: Աշխատանքում կատարվել է փաստական նյութի համատեքստային-նկարագրական, կառուցվածքային (բառային-շարահյուսական), իմաստաբանական, գործառական-գործաբանական, ինչպես նաև վիճակագրական վերլուծություն:

Հետազոտված **փաստական նյութը** բրիտանական և ամերիկյան ժամանակակից գեղարվեստական գրականությունից քաղված երկխոսական միավորներ են, որոնք կազմում են ավելի քան 1500 նմուշ:

Աշխատանքի **տեսական արժեքն** այն է, որ կատարված քննությունն ու ստացված արդյունքները նպաստում են դիսկուրսի տեսության, խոսողական ակտերի տեսության հարստացմանը, խոսողական ակտերի հաղորդակցական, իմաստագործաբանական ուսումնասիրությունների խորացմանը:

Ուսումնասիրության մեջ շեշտադրվում է լեզվի մեջ մարդկային գործոնի դերը, կարևորվում խոսողի սոցիալական-անհատական փորձը, նրա դերային-կարգավիճակային բնութագիրը:

Հետազոտության **գործնական արժեքը** պայմանավորված է ուսումնասիրության արդյունքների լայն կիրառական հնարավորություններով՝ մասնավորապես լեզվագործաբանության բնագավառում հետազոտական աշխատանքներ կատարելիս: Ուսումնասիրության փաստական նյութը և դրա քննության ար-

²Austin J. L. How to Do Things with Words. Oxford: Clarendon Press, 1969; Leech G. N. Principles of Pragmatics. London: Longman, 1983; Widdowson H. Discourse Analysis. Oxford: Oxford University Press, 2007; Brown P., Levinson S. Universals in Language Usage: Politeness Phenomena // Questions and Politeness / Ed. by E.N. Goody. Cambridge: Cambridge University Press, 1978; Гордон Д., Лакофф Дж. Постулаты речевого общения // Новое в зарубежной лингвистике. Вып. 16. М.: Прогресс, 1985.

ոյունքները հնարավորություն կտան հոգեբաններին, հանրալեզվաբաններին ու մանկավարժներին կիրառել դրանք հոգեբանական տեստերի, խաղերի, որոշակի դառնթացների անցկացման ընթացքում և իրենց ներդրումը կունենան հասարակության տարբեր խավերի միջանձնյա հարաբերություններում հաջող հաղորդակցություն ապահովելու գործում, նաև թույլ կտան մշակել խոսքային փոխներգործությունը արդյունավետ դարձնելու ռազմավարական ծրագրեր:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված տեսական ու գեղարվեստական գրականության ցանկերից, ծանոթագրություններից և հավելվածից:

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության թեման և հիմնահարցերը, կատարված հետազոտության արդիականությունն ու նորոյթը, պարզաբանվում են ատենախոսության նպատակն ու խնդիրները, ներկայացվում է հետազոտության փաստական նյութը, մեթոդաբանական հիմքը, ինչպես նաև տրվում են աշխատանքի տեսական ու գործնական արժեքները:

Առաջին գլուխը («Խրախոսանքի իմաստագործաբանական բնութագիրը») բաղկացած է չորս ենթագլուխներից՝ «Խրախոսական դիսկուրսի գնահատողական հայեցակերպը», «Խրախոսանքը որպես քաղաքավարության դրսևորում», «Խրախոսական երկխոսության հաղորդակցական կաղապարը» և «Խրախոսանքի անուղղակի արտահայտությունը անզերեմում»: **Այս գլխի առաջին ենթագլխում** հանգամանորեն ուսումնասիրվում և վերլուծվում են գնահատումն ու նրա տիպերը, և դրանց լեզվական արտահայտությունը խրախոսական դիսկուրսում: Խրախոսանքը աշխատանքում դիտարկվում է որպես դրական գնահատում, որը սերտորեն կապված է հուզականության հետ: Հաղորդակ-ցական նպատակներին հասնելու գործում կարևոր դեր է կատարում խոսքի և խոսողական ակտերի հուզականությունը, որով էլ պայմանավորված է հաղորդակցության հաջող գործընթացը: Գնահատումը սերտ կապի մեջ է նաև արտահայտչականության հետ: Գնահատողական ասույթները դասվում են էքսպրեսիվների՝ արտահայտչականների շարքին, քանի որ անձի զգացմունքները, վերաբերմունքը արտահայտվում են էքսպրեսիվ ակտերի օգնությամբ³: Խրախոսական դիսկուրսում կարևորվում է խոսողի՝ հասցեագրողի արտահայտած դրական գնահատականի անկեղծությունը կամ կեղծությունը, ըստ որի էլ խրախոսական խոսքն աշխատանքում դիտարկվում է որպես գովաբանություն կամ շողջորդություն: Աշխատանքի այս բաժնում ուսումնասիրվում են նաև դրական գնահատման շարժառիթները: **Երկրորդ ենթագլխում** խրախոսանքը դիտարկվում է որպես դրական քաղաքավարության դրսևորում, իսկ խրախոսանքի արտահայտման ձևերը՝ որպես խոսքային վարվելակարգի արտահայտություն, կեղծ քաղաքավարության (շողջորդության) կամ անկեղծ քաղաքավարության (գովաբանության) դրսևորում: Խրախոսական նշանակությամբ խոսողական ակտերն անձի վարկանիշը բարձրաց-

³Searle, J. R. Expression and Meaning: Studies in the Theory of Speech Acts. Cambridge, England: Cambridge University Press, 1979.

նող ասույթներ են: Սա խոսքային փոխներգործության մեջ արդեն իսկ քաղաքավարության սկզբունքի մարմնավորումն է: Աշխատանքում հատուկ ուշադրության է արժանանում հաղորդակցության վարվելակարգման երևույթը, որը խոսողական ակտում դիտվում է իբրև տարածայնություն հաղորդակցական և իրական ճշմարտության միջև⁴: Վարվելակարգումը սահմանվում է որպես խոսակցի հանդեպ հետաքրքրության դրսևորում, նրա արժանիքների ճանաչում, իսկ թերությունների նկատմամբ՝ հանդուրժողականություն: **Երրորդ ենթագլխում** ներկայացվում է խրախուսական դիսկուրսում կիրառվող միավորների դաշտային կառուցվածքը, ընդ որում քննության են առնվում դաշտի հաղորդակցական-գործաբանական, իմաստագործառական և շարահյուսական առանձնահատկությունները⁵: Այս բաժնում ներկայացվում է նաև խրախուսական դիսկուրսի հաղորդակցական ռազմավարությունը, որը հաղորդակցական մտադրության իրականացման կարևոր նախապայման է: Դրա քննությունը սերտորեն առնչվում է «հաղորդակցական դեր» հասկացությանը, որն ըստ էության մատնացույց է անում հաղորդակցվողներից մեկի նախաձեռնողական դերը տվյալ խոսողական ակտում: Այս ենթագլխում քննության են առնվում նաև խրախուսական իրադրության յուրահատկությունները, խրախուսանքի հաղորդակցական մտադրության իմաստագործաբանական բնութագիրը, ընդ որում հաղորդակցական մտադրությունը դիտվում է որպես ցանկությունների բազմատեսակություն, որը ձևավորվում է նպատակների և դրդապատճառների հիմքի վրա, և դրա իրականացման համար խոսողի կողմից կիրառվում են համապատասխան խոսողական ակտեր: Խոսողի հաղորդակցական մտադրությունը խրախուսանք արտահայտող խոսողական ակտում միտված է իրականացնելու լսողի վերաբերմունքի դրական փոփոխություն խրախուսանքի առարկայի նկատմամբ: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ խոսողն ենթադրում ու պլանավորում է պերլոկուտիվ ազդեցություն: Իրականացնելով պերլոկուտիվ ազդեցությամբ գովաբանություն կամ շողոքորթություն արտահայտող խոսողական ակտեր՝ խոսողը նախապես պլանավորում է սեփական խոսողական ակտի հետևանքները: Տվյալ ասույթի միջոցով հասցեագրողը ազդում է հասցեատիրոջ վրա՝ նրա կողմից որոշակի գործողության ակնկալիքով, որն էլ համարվում է այս խոսողական ակտերի պերլոկուտիվ ազդեցությունը: Ընդ որում, կարևորվում է ոչ միայն հասցեատիրոջ կողմից ասույթի իմաստը հասկանալու իրողությունը, այլ նաև իրավիճակի ու վարքագծի այն փոփոխությունները, որոնք տվյալ ասույթի ընկալման արդյունք են:

Առաջին գլխի չորրորդ ենթագլխում ներկայացվում են խրախուսանքի ար-

⁴Почепцов Г. Г. Слушатель и его роль в актах речевого общения // Языковое общение: Единицы и регулятивы: Межвуз. сб. науч. трудов. Калинин: КГУ, 1987.

⁵Проблемы функциональной грамматики: Полевые структуры / Отв. ред. А.В. Бондарко, С.А. Шубик. СПб. М.: Наука, 2005; Формановская Н.И. О коммуникативно-семантических группах и интенциональной семантике их единиц высказывания // Языковое общение и его единицы. Калинин: КГУ, 1986.

տահայտման անուղղակի միջոցները: Անուղղակի խոսողական ակտի իլլոկուտիվ մտադրությունը արտաբերված ասույթի լեզվական կառույցի մեջ ուղղակի արտացոլում չի ստանում, ասույթի գործաբանական իմաստը չի համընկնում նրա իրական իմաստի հետ, հիմնական իլլոկուտիվ իմաստը չի համապատասխանում հաղորդակցական իրադրությանը, ինչը խոսակցին ստիպում է փնտրել ասույթի իրական իմաստը: Այս ակտերի իլլոկուտիվ մտադրությունը քողարկված ձևով է հանդես գալիս և հասցեատիրոջ կողմից ապակողովորվում է նրա հաղորդակցական հմտության և իրազեկության շնորհիվ: Տեսական խնդիրների արծարծմամբ և փաստական նյութի քննությամբ հանգել ենք այն եզրակացության, որ անուղղակի խոսողական ակտերը ներակա իմաստ պարունակող ակտեր են: Մեր դեպքում դրանք պարունակում են այնպիսի գնահատողական ասույթներ, որտեղ գնահատումը արտահայտվում է ներակա կերպով: Անուղղակի խոսողական ակտերի մյուս տեսակը այն ակտերն են, որոնք պարունակում են կիսաներակա գնահատողական ասույթներ. դրանք ունեն դրական գնահատականի իմոյթ, սակայն հանդես են գալիս խրախուսական ասույթներին ոչ բնորոշ կառույցներով, հիմնականում՝ հարցականներով: Այս մասում քննության են առնվում նաև ներակա պերֆորմատիվ ասույթները, որոնց իրականացման գործընթացում խոսողը բացահայտ կերպով չի կարող արտահայտել իր իրական մտադրությունները, այլ պետք է ջանասիրաբար քողարկի, քանի որ այլ կերպ ասույթը հաջողված չի լինի⁶:


Աշխատանքի **երկրորդ գլխի** («Խրախուսանքի արտահայտման խոսքային և ոչ խոսքային միջոցները») հիմնական խնդիրներն են խրախուսանքի արտահայտման ձևերի բնութագրումը՝ իմաստային, գործաբանական, բառային և շարահյուսական առանձնահատկությունների տեսանկյունից: Այս գլխում մանրամասն վերլուծության են ենթարկվում **գովաբանությունը** և **շողոթոթությունը**, որպես խրախուսական դիսկուրսի դրսևորման առավել տարածված, բնորոշ և հաճախակի կիրառվող ձևեր, վերլուծվում են գովաբանություն և շողոթոթություն արտահայտող խոսողական ակտերը, տրվում է այդ ակտերի իմաստային-գործաբանական նկարագիրը, ինչպես նաև քննվում են դրանց բառային և շարահյուսական դրսևորումները:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում («Գովաբանություն արտահայտող խոսքի իմաստագործաբանական բնութագիրը») մանրամասն վերլուծության է ենթարկվում **գովեստի** խոսողական ակտը՝ որպես անկեղծ դրական գնահատման՝ գովաբանության արտահայտման հիմնական ձև: Գովեստը արտահայտչական խոսողական ակտ է, որը ենթադրում է խոսողական ակտի նպատակաուղղվածության դրսևորում: Այս խոսողական ակտի իլլոկուտիվ նպատակն է փորձել գովելու միջոցով խրախուսել դիմացինին և մղել կատարելու որոշակի գործողություն, որը ներկայացվում է նախադրությային բովանդակությամբ:

⁶ Вендлер З. Иллокутивное самоубийство // Новое в зарубежной лингвистике. Вып. 16. Лингвистическая прагматика. М., 1985.

Նախնական պայմանն այն է, որ լսողն ի վիճակի է իրականացնելու այդ ծրագիրը, իսկ անկեղծության պայմանը ենթադրում է, որ խոսողը ցանկանում է, որ լսողն իրականացնի տվյալ գործողությունը: Գովեստի մեջ ընդգրկել ենք նաև **ինքնագովեստը**, որն, ի տարբերություն նախորդի, բացասական երանգավորում ունի: Իրականացնելով ինքնագովեստի ակտ՝ խոսողը խախտում է քաղաքավարության սկզբունքը, քանի որ ինքնագովեստի նպատակը հիմնականում ուշադրության, հավանության, հիացմունքի և գովեստի արժանանալն է շրջապատի կողմից, որտեղ դրական գնահատականի ենթադրյալ օբյեկտը ինքնուրույն, միանգամայն գիտակցված կերպով խթանում է իր իսկ հասցեին գովեստի շռայլումը:

Ստորև բերվող գծապատկերը ներկայացնում է խրախուսանքի արտահայտման ձևերի իմաստագործաբանական բնութագիրը.



Գովեստի ակտի իրականացման հիմնական շարժառիթներ ենք համարում գովեստի ենթադրյալ օբյեկտի կողմից հրամանների, ցուցումների, խնդրանքների կատարումը, օբյեկտի ունակությունները, կարողությունները, նրա դրական արարքները, նրա հաջող խոսքային և/կամ ոչ խոսքային գործողությունները, կամ էլ նրա անելանելիությունը՝ դժգոհությունը, զայրույթը, ընդհանուր բացասական հուզական վիճակը:

Ստորև ներկայացվող օրինակում գովեստի իրականացման շարժառիթ է օբյեկտի մեջ դրական հատկանիշների ակնհայտ առկայությունը: Գովեստի հասցեագրողը ուսուցիչն է, հասցեատերը՝ ուսանողը: Գովեստը անկեղծ է, այն գովաբանություն է՝ ուղղված ուսանողին:

"This essay is wonderful, Carrie. You are very talented, gifted ... Do you plan a career as a writer?"

"I haven't thought about it..." (Stone K., Roommates)

Մեր համոզմամբ՝ գովեստի ակնկալման առավել հաջող իրադրություն կարող է ստեղծվել հետևյալ խոսքային և/կամ ոչ խոսքային ինքնագովեստի տեսակների օգնությամբ, որոնք ըստ էության, գովեստի ակնկալման շաժառիթներ են. խոսողի ուղղակի հարցում իր արարքների/հատկանիշների մասին, խոսակիցներից կարծիքի հարցում (ակնհայտ և ոչ ակնհայտ), գովեստի առիթի ստեղծում, ըստ էության՝ դրական ինքնագնահատական:

"You haven't said a word about my appearance."

"You look just fine." (Williams T., A Streetcar Named Desire)

Այս օրինակում ինքնագովեստի նախաձեռնողը ձգտում է ստանալ աջակցություն, հավատալ իր ուժերին և հնարավորություններին: Հաճախ գրուցակցից աջակցություն ստանալու հաղորդակցի նման մտադրությունը ուղեկցվում է հաղորդակցությունը նախաձեռնողի ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային գործողություններով:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ գովաբանությունը կարող է արտահայտվել նաև ***հավանության, հիացմունքի*** միջոցով: Ակնհայտ է հուզական բառապաշարի և այսօրինակ խոսողական ակտերի կառուցվածքային զգալի տարբերությունը:

1. *"Let's ride across the swamp to Able Wynder's place and tell him we're all four home again and ready for drill."*

"That's an idea!" cried Brent with enthusiasm. (M. Mitchell, Gone with the Wind)

2. *"And what do you think of it?"*

"It's quite enough".

"I'm glad you think so." (Laurence D. H., Sons and Lovers)

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գովաբանությունը շատ հաճախ կարող է արտահայտվել նաև ***հաճոյախոսությամբ***: Նշենք, որ միայն խոսողական ակտի համատեքստի, հաղորդակիցների փոխհարաբերությունների բնույթի, նրանց կարգավիճակների ու դերերի և հասցեատիրոջ արձագանքի վերլուծությունը կարող է օգնել հաճոյախոսությունների համապատասխան վերծանման հարցում՝ դրանք վերագրելով կամ շողոքորթությանը, կամ գովաբանությանը⁷: Այս հարցում կարևորվում է նաև տվյալ խոսողական ակտի նպատակը: Այն փաստը, որ հաճոյախոսություն հասցեագրողները կարող են

⁷Зверева Е. В. Коммуникативно-речевая ситуация "Комплимент" (на материале испанского языка): Автореф. дис. канд. филол. наук. М., 1995.

թե՛ անկեղծ լինել և թե՛ կեղծ, հաստատվում է տվյալ խոսողական ակտում խոսքային վարքագծի բնույթով: Մի կողմից՝ դրա հասցեագրողը պետք է հետևի խոսքային վարքագծի հիմնական նպատակին, այսինքն՝ արտահայտի բարյացկան վերաբերմունք գրուցակցի հանդեպ և հետագա շփման համար ստեղծի բարենպաստ մթնոլորտ, մյուս կողմից՝ բարյացկան մթնոլորտի ստեղծման համար բնավ չի պահանջվում անկեղծություն⁸: Հաճոյախոսություն հասցեագրողը կարող է կիրառել կեղծ քաղաքավարություն, որի ներքո կարող է թաքնված լինել այլ վերաբերմունք: Հետևյալ հաղորդակցական համատեքստում դրսևորվում է անկեղծ քաղաքավարություն, գովաբանություն՝ հաճոյախոսության տեսքով.

He threw his arms round her and kissed her. "By God, what a performance you gave."

"You weren't so bad yourself, dear." (Maugham W.S., Theatre)

Ասույթի դրդապատճառը կապված է կին-հասցեատիրոջ անձնական որակների (ունակությունների) հետ. ամուսինը բարձր է գնահատում կնոջ դերասանական վարպետությունը՝ գովաբանելով նրան:

Տվյալ հաճոյախոսության ներակա մտավոր մոդուսը⁹ (խոսողի վերաբերմունքը դիկտումի՝ ասվածի նկատմամբ) կարող է ներկայացվել որպես / *think (believe)*: Այսինքն՝ հաճոյախոսություն հասցեագրողի մտավոր պրոցեսը կարելի է ամբողջությամբ ներկայացնել որպես / *I think (believe) that you've given a very good performance*: Ասույթի հասցեատիրոջ արձագանքը կարող է գնահատվել որպես հաճոյախոսության ներակա ընկալում, որն արտացոլում է հասցեատիրոջ համաձայնությունը անկեղծ իմաստային կանխենթադրույթով՝ *you played wonderfully*:

Պատասխան-արձագանքը վկայում է հաղորդակիցների գործաբանական կանխենթադրույթների համընկնման և հասցեատիրոջ հուզական վիճակի բարելավման մասին՝ որպես ասույթի պերլոկուտիվ արդյունք: Հաճոյախոսության ամբողջական ընդունումը բացատրվում է «հասցեատերը վստահ է իրեն ուղղված խոսքերի անկեղծության մեջ» արտահայտության գործաբանական կանխենթադրույթով:

Քննությունը ցույց է տալիս, որ գովաբանությունը կարող է արտահայտվել նաև *կենացի, շնորհավորանքի* ակտերի միջոցով: Փաստական նյութից կարող ենք եզրակացնել, որ թե՛ կենացը, թե՛ շնորհավորանքը կարող են ուղեկցվել հասցեատիրոջ մասին դրական գնահատականով՝ գովաբանությամբ կամ շողոքորոթությամբ:

Ստորև բերված օրինակում հասցեագրողը, որը հայտնի լրագրողի՝ Էլիզաբեթի ամուսնու ղեկավարն է և հրատարակչության տնօրենը, կենաց է առաջար-

⁸Формановская Н. И. Речевая интенция как объект исследования в лингвистическом и методическом аспектах // Лингводидактический поиск на рубеже веков. М.: ИРЯ, 2000.

⁹Арутюнова Н. Д. Язык и мир человека. М., Языки русской культуры, 1998.

կում էլիզաբեթի պատվին, որի միջոցով գովաբանում է նրա մասնագիտական հմտությունները: Վերջինիս հողվածը հրատարակվել է կենտրոնական թերթերից մեկում:

"My dear Elizabeth, we haven't toasted your triumph!" He lifted his glass. "To a lovely and talented lady, and her "Private affairs"... You're not a local writer anymore, my dear; you've leaped over all of us."

"It was only one column," Elizabeth protested.

"When a magazine with such an enormous readership reprints your column, you're a national writer and you must think of yourself as one. That's how I talk about you to my friends when I read your columns to them... I carry them around with me...My dear Elizabeth, Joey is every teenager in America! This is a masterpiece!"

Elizabeth regarded her wine glass, wondering how one responded to such overheated praise. (Michael J., Private Affairs)

Ասույթի հասցեագրողի իլլուկուտիվ մտադրությունը հասցեատիրոջ հուզական վիճակը բարելավելն է՝ նրա արժանիքները գովաբանելով: Հասցեագրողը հասնում է ցանկալի պերլուկուտիվ արդյունքին՝ հասցեատիրոջն անվանելով ազգային գրող (*national writer*), իսկ հողվածը՝ գլուխգործոց (*masterpiece*):

"Brilliant. Eighteen months of stability. And reduced costs. And to transform a confrontation into a dialogue on improving the paper...A masterpiece. Congratulations, my boy." He went to Matt and put his hands on his shoulders. "...I'm glad we have you on our side. Of course, I never doubted you'd succeed... Of course we all knew you'd never faced a situation like it before, but I'd put money on you against Dugan any time. You've got brains and class. Dugan hasn't." (Michael J., Private Affairs)

Ինչպես տեսնում ենք օրինակից, շնորհավորանքի ակտին զուգահեռ իրականացվում է նաև գովեստի ակտ, որի նպատակն է տալ անկեղծ դրական գնահատական ենթակա աշխատակցի մասնագիտական հմտություններին:

Փաստական նյութի քննության արդյունքում կարող ենք ենթադրել, որ քաղաքավարության կանոնը առաջարկում է հասցեագրողին օգտագործել որոշակի բառային միջոցներ և ստեղծել բարեկամական միջավայր: Հատուկ կշիռ են ձեռք բերում հարգանքի կարգախոսը, գրուցակցի հանդեպ նախապատվության վերաբերմունքը, մեծահոգությունը:

Աշխատանքի **երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում** («Գովաբանության բառային և շարահյուսական դրսևորումները») մանրամասն վերլուծության են ենթարկվում գովաբանության արտահայտման բառային և շարահյուսական միջոցները: ***Բառային միջոցներից են՝ դրական հուզական վիճակ արտահայտող***

- **բայերը՝** *to praise, to admire, to worship, to approve, to extol,*

- գոյականները` *admiration, gratitude, happiness,*
- սաստկական մակբայները` *very much, really, terribly,*
- ածականները` *proud, brave, frank, wonderful, beautiful, smashing,*
- մակբայները` *proudly, bravely, frankly,*
- դիմելաձևեր/կոչականները` *dear, honey, darling,*
- համեմատություն արտահայտող շաղկապները` *like, than, as...as:*

Գովաբանությունը հաճախ արտահայտվում է **գնահատող, հուզարտահայտչական միավորներով` հիմնականում բացականչական կառույցներով.**

- գնահատող բառ` ածական + գոյական` *Wonderful idea!*,
- հարցական դերանուն + գնահատող բառ` *How lovely!*
- ձայնարկություն + գնահատող բառ` *Oh, perfect!*,
- սաստկական մասնիկ` *so, such* + գնահատող բառ` *Such intelligence!*,
- որոշակի դարձվածային շարույթ` *to be worth a million,*
- հաստատական ասույթ-բանաձև` *Good for you! , Well done!*

Ըստ փաստական նյութի վերլուծության արդյունքում ստացված վիճակագրական տվյալների` **շարահյուսական միջոցներից** գովաբանական ակտերին ավելի շատ բնորոշ է **զեղչված անդամով նախադասությունը`**

"A fine idea," Mary Lou said enthusiastically. (Collins J., Lady Boss)

Գովաբանությանը բնորոշ է նաև **անվանական նախադասության կրկնությունը:** Գովաբանության կրկնությունը ավելի ազդեցիկ, ավելի հուզական է դարձնում խոսքը, և դրա շնորհիվ ավելի բազմաբնույթ է ներկայացվում իլլուկոտիվ մտադրությունը: Օրինակ`

"Lovely voice, lovely voice!" said Aunt Kate. (Joyce J., Dublinners)

Սաստկական մակբայով արտահայտված նույն բառի կրկնությունը ևս զգալիորեն բարձրացնում է խոսքի հուզականությունը`

"...She's beautiful, really beautiful..." (Braine J., Room at the Top)

Անգլիական լեզվամշակույթին բնորոշ են ոչ միայն նույն բառի կրկնությունը, այլև հոմանշային ասույթների զուգակցումները` **շարահյուսական զուգահեռությունները:** Իմաստային նոր երանգ հաղորդող հոմանշի կիրառումը ավելի է մեծացնում ասույթի պերլոկուտիվ ազդեցությունը`

"He was an exceedingly lovable man, he was extremely handsome."
(Salinger J., Selected Works)

Գովաբանությանը բնորոշ է նաև **շրջուն շարադասությունը.**

"Her name is Cora Bellinger. She is studying for opera. Wonderful voice she has". (Wodehouse P.G., Very Good, Jeaves).

Գովաբանությանը խորթ չեն **հռետորական հարցերը**: Մեր քննությունը ցույց է տալիս, որ գովաբանության համար հատկապես օգտագործվում են անջատական հարցերը և ժխտական հարցական նախադասությունները`

"Very lovely girl, isn't she?" "Yes, indeed," said Brush." (Wilder T., Heaven's My Destination)

Ինքնագովեստով արտահայտված գովաբանությունը հիմնականում դրսևորվում է *to boast, to brag, to glorify* բայերով: Այսպիսի խոսողական ակտի համար, ի տարբերություն զուտ գովեստի, առավել բնորոշ է այդ ակտի իրականացումը բարդ նախադասության միջոցով: Ինքնագովեստին բնորոշ են բացականչական և հարցական նախադասությունները և հետևյալ տիպի արտահայտությունները` *to do all by oneself, to want to be noticed, admired* և այլն: Ինքնագովեստի բնորոշ օրինակ կարող է համարվել կաղապարային կառուցվածք ունեցող հաստատական ասույթը. *I don't want to boast, but...*

Գովաբանության արտահայտման **ոչ խոսքային միջոցներից** մեր նյութի շրջանակներում առանձնապես աչքի են ընկել **անկեղծ և բնական ժպիտը, գլխի դրական շարժումը, համբույրը, հայացքը** և այլն` որպես հիացմունքի և գոհունակության արտահայտություն:

Շորրոդ ենթագույնը` («Շողոքորթություն արտահայտող խոսքի իմաստագործաբանական բնութագիրը»), նվիրված է շողոքորթության նկարագրությանը, որը աշխատանքում քննվում է որպես թաքնված շահադիտական, կեղծ դրական գնահատում: Շողոքորթություն արտահայտող ակտերը դիտվում են որպես արտահայտչական, ներակա-պերֆորմատիվ ասույթներ պարունակող խոսողական ակտեր: Շողոքորթողի մտադրությունը իր նպատակին հասնելն է` քողարկելով իր շահադիտական ծրագրերը, փորձելով հաճույք պատճառել լսողին ու արժանանալ նրա հավանությանը: Շողոքորթական ակտերի պերլոկուտիվ արդյունքը կամ շողոքորթության հասցեագրողի մտադրությունների հաջող իրականացումը, մեր կարծիքով, կարող է բնութագրվել որպես աստիճանական. խոսակցին հաճույք պատճառելը, իր հանդեպ դրական տրամադրելը, նրա հուզական վիճակը բարելավելը, նրա վստահությունը «նվաճելը» աստիճանաբար տանում են դեպի սպասվող նյութական կամ ոչ նյութական շահադիտական օգուտ քաղելը, որն էլ ցանկացած շողոքորթական ակտի պարտադիր վերջնական փուլն է:

Ջուտ շողոքորթական ակտով արտահայտված ստորև բերվող հաղորդակցական համատեքստում, որտեղ հասցեագրողն է հայտնի թատերական ռեժիսորը, իսկ հասցեատերը` ոչ պակաս հայտնի դերասանուհին, հասցեագրողը հասցեատիրոջ հանդեպ հարգանք և հիացմունք տածելով հանդերձ` միաժամանակ հասկանում է, որ միայն հասցեատիրոջ տաղանդը կարող է օգնել իրեն հասնելու անհրաժեշտ արդյունքի

(բարձրացնելու իր ղեկավարած թատրոնի համբավը): Այդ պատճառով հասցեագրողի մտադրությունը կարելի է նկարագրել որպես հասցեատիրոջն իր թատերախումբ ընդգրկելու բուռն ցանկություն:

"I never slept a wink all night for thinking of you," he said ... "I think you're a genius."

"It's sweet of you to say so."

"... You've got everything. You've got the right height, you've got a good figure, you've got an indiarubber face."

"Flattering, aren't you?"

"... That's the face an actress wants. The face that can look anything, even beautiful, the face that can show every thought that passes through the mind. Last night ... the words you were saying wrote themselves on your face. ... Your timing is almost perfect. That couldn't have been taught, you must have that by nature." (Maugham W. S., Theatre)

Ձգտելով հասցեատիրոջ վրա գործել հաճելի տպավորություն, նվաճել նրա վստահությունը՝ խոսողը կիրառում է լեզվական միավորներ՝ իբրև խոսակցի անձնական որակների (արտաքին, տաղանդ և այլն) կեղծ դրական գնահատման միջոց. *You have a nice voice, you're perfect*, և այլն: Հասցեատերը, տիրապետելով հասցեագրողի մասին անհրաժեշտ տեղեկատվության, բացահայտում է նրա ոչ անկեղծ մտադրությունները: Սակայն դա չի խանգարում շողոքորթության հասցեագրողին իրականացնել իր մտադրությունները՝ հմտորեն օգտվելով «հասցեատերը սովոր է գովաբանությունների» գործաբանական կանխենթադրույթից:

Կարծում ենք, անջատական հարցի տեսքով *Flattering, aren't you?* արծազանքը կարող էր հասցեագրողի կողմից ընկալվել որպես հասցեատիրոջ մտադրության անուղղակի արտահայտություն՝ նրան դուր են գալիս իր հասցեին շռայլված խոսքերը: Այդ պատճառով էլ հասցեագրողը շարունակում է հասցեատիրոջն ողողել կեղծ գովաբանություններով: Բազմաբառ ասույթների պերլոկուտիվ արդյունքը շողոքորթողի համար դրական է. կին-հասցեատերը ընդունում է նրա առաջարկությունը:

Հաջորդ օրինակը շողոքորթողի համալիր մտադրությունների արտահայտությունն է. Տիկին Թոջերսը՝ իջևանատան տիրուհին, իմանում է վարձակալներից մեկի հեռանալու որոշման մասին, քանի որ վերջինս չի կարողանում հանդուրժել ոմն Ջինկինսի ներկայությունը: Ձգտելով թույլ չտալ վարձակալին հեռանալ՝ տիկին Թոջերսը դիմում է երիտասարդին շողոքորթական խոսքերով:

"Dear, dear!" cried Mrs. Todgers, "what would I have given to have prevented this? To lose you, sir, would be like losing the house's right-hand. So popular as you are among the gentlemen; so generally looked up to; and so much

liked! I do hope you'll think better of it ... (Dickens Ch., The Life and Adventures of Martin Chuzzlewit)

Տիկին Թոջերսի խոսքերի շահադիտական իմաստն ակնհայտ է: Նա ձգտում է պահպանել իր եկամուտը: Համոզելով երիտասարդին չլքել իր իջևանատունը՝ տիկին Թոջերսը ձգտում է բարելավել նրա հուզական վիճակը: Բառերը, որոնք կիրառվում են հասցեագրողի կողմից (*so generally looked up, so much liked*) կարող են արտահայտել հիացմունքի, հասցեատիրոջ հանդեպ ակնածանքի հույզեր՝ բարդացնելով շողոքորթողի իրական մտադրությունների վերծանումը: Որպես կեղծ գովաբանությունների առարկա՝ հասցեագրողն ընտրում է հասցեատիրոջ երևակայական հայտնիությունն ու արժեքավորությունը և նրա բնավորությունը, ինչը ասույթի կեղծ իմաստային կանխենթադրույթն է: Այնուհետև, հասցեագրողը սկսում է չափազանցնել հասցեատիրոջ անձնական որակները՝ նրա վստահությունը շահելու նպատակով:

Այսպիսով՝ մենք եզրակացնում ենք, որ այն իրադրությունում, երբ շողոքորթողը հետապնդում է ակնհայտ շահադիտական նպատակներ, ասույթի հաջողությունը կախված է մի շարք գործոններից, որոնց մեջ գլխավորը հասցեագրողի վարքագծի ճիշտ մարտավարությունն է: Հասցեագրողի սոցիալական կարգավիճակը կարող է հավասար կամ ավելի ցածր լինել, քան հասցեատիրոջ կարգավիճակը:

Norman: You look fabulous this morning.

Ruth: I look dreadful. I couldn't see my face. I haven't had a bath. I feel terrible.

Norman: I love that dress. It's great.

Ruth: It's the same one I had yesterday. (Ayckbourn A., Living Together)

Ներկայացված երկխոսական համատեքստը պատկերում է խոսողի փորձը՝ փարատելու շողոքորթության օբյեկտի բոլոր կասկածները դրական գնահատականի անկեղծության և համապատասխանության վերաբերյալ *հաճոյախոսությունների* սաստկացման և կրկնության միջոցով: Վերջինների ակնհայտ անհամապատասխանությունը, չհիմնավորվածությունը բնորոշվում է պատասխանների (Նորմանի՝ կեղծ և Ռութի՝ անկեղծ), ինչպես նաև դիտարկվող իրադրության ընդհանուր կանխենթադրույթի հիման վրա. Նորմանը իրեն մեղավոր է զգում կնոջ հանդեպ և համարում է, որ նրա զգեստի վերաբերյալ հաճոյախոսություն անելը արդյունավետ միջոց է հարաբերությունների հարթեցման համար:

Կատարած դիտարկումների արդյունքում գալիս ենք այն եզրակացության, որ շողոքորթությունը, գովաբանության նման, նույնպես կարող է արտահայտվել *հաճոյախոսության, կենացի, շնորհավորանքի*, ինչպես նաև *հավանության* ու *հիացմունքի* խոսողական ակտերով:

Չորրորդ ենթագլուխը («Շողոքորթության բառային և շարահյուսական դրսևորումները») նվիրված է շողոքորթության արտահայտման բառային և շարահյուսական միջոցների քննությանը: Այս միջոցներից շատերը հանդիպում են

նաև գովաբանական ակտերում: Շողոքորթության արտահայտման բառային միջոցներն են՝ **գնահատող, հուզական** երանգ ունեցող

- **աժականները՝** *beautiful, kind, brilliant, honey,*
- **գոյականները՝** *queen, rose, genius, angel,*
- **բայերը՝** *to flatter, to admire, to allure, to adulate,*
- **դիմելածները՝** *my Lord, your Grace, my queen,*
- **սաստկական մակբայները՝** *so much, highly, terribly, awfully,*
- **համեմատություն արտահայտող շաղկապները՝** *like, than, as ... as՝ to be as fresh as a daisy, be like an angel,*
- **ձայնարկություն + գնահատող բառ կապակցությունները՝** *ah, upon my words,*
- **so, such + գնահատող բառ կապակցությունները՝** *such a noble character, so much grace,*
- **աժականով արտահայտված գնահատող բառ + գոյական կապակցությունները՝** *splendid idea!,*
- **հարաբերական դերանուն + գնահատող բառ կապակցություններով արտահայտված բացականչական ասույթները՝** *How interesting!,*
- **ինքնանվաստացնող արտահայտությունները՝** *to be at one's feet, to be the shadow of one's greatness, to be all the world to smb,*
- **փոխաբերություններով՝** *be a jewel, to be the marvel of mankind* և այլն:

Շարահյուսական վիճակագրական վերլուծությունից պարզ է դառնում, որ շողոքորթությանը առավել բնորոշ են **համեմատությունները**, հատկապես *than* շաղկապով, *like* համեմատական բառով և *as...as* շաղկապով համեմատական կառույցները՝

Darling, you're wonderful and you're as beautiful as a Greek God... (Maugham W. S., Theatre)
You're much more beautiful than your picture." (Quinn S., Regrets Only)

Էական դեր կարող են խաղալ **աժականի գերադրական աստիճանով արտահայտված կառույցները՝**

Lord Augustus: ...You are the most adorable of all ladies. (Wilde O., Plays)

Կրկնությունները՝

Your daughter has made a conquest – a conquest on which I may congratulate you. Sir Mulbery, my dear ma'am, Sir Mulbery is her devoted slave," (Dickens Ch., The Life and Adventures of Nicholas Nickleby)

Հռետորական հարցերը՝ արտահայտված ժխտական-հարցական կառույցներով, երբեմն նաև անջատական հարցերով:

“Why didn’t I?” replied her husband. “Had I not seen, at a morning concert, the demdest little fascinator in all the world, and while that fascinator is my wife, may not all the countesses and dowagers in England be...?” (Dickens Ch., The Life and Adventures of Nicholas Nickleby)

Շեշտված արտահայտություններով նախադասությունները`

“What a delight, what a comfort, what a happiness this amiable creature must be to you,” said Sir Mullbery, throwing into his voice the indication of the warmest feeling. (Dickens Ch., The Life and Adventures of Nicholas Nickleby)

Ջեղչված նախադասությունները`

“So strong, so proud, so kind and so beautiful! You are astonishing, yes, astonishing.” (Bennett A., The Old Wives’ Tale)

Շրջուն շարադասությամբ նախադասությունները`

“Never have I seen a woman like you!” (Bennett A., The Old Wives’ Tale)

Ստորև բերված աղյուսակում ամփոփված են շարահյուսական միջոցների վիճակագրական տվյալները.

| | շարահյուսական միջոցներ | գովաբանություն | շողոթորթություն |
|---|---|-----------------------|------------------------|
| 1 | համեմատական կառույցներ` հատկապես գերադրական աստիճանով | 10% | 44% |
| 2 | կրկնություններ և զուգահեռություններ | 24% | 21% |
| 3 | շրջուն շարադասություն | 12% | 13% |
| 4 | շեշտված կառույցներ | 9% | 9% |
| 5 | զեղչված անդամով նախադասություններ | 42% | 8% |
| 6 | հռետորական հարցեր, ժխտական- հարցական կառույցներ, անջատական հարցեր | 3% | 5% |

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քերականական այս կամ այն կառույցի կիրառումը խոսքում պայմանավորված է հաղորդակցական նպատակով: Այդ է պատճառը, որ քերականության ընկալման գործընթացն անբաժանելի է այն սկզբունքներից, որոնցով տվյալ լեզվի խոսակիրները կազմում են իրենց խոսքը` որպես մեկ ամբողջություն:

Հետազոտությունը հնարավորություն է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

1. Խրախուսանքը խոսողի կողմից հասցեատիրոջն ուղղված դրական հուզական գնահատականով արտահայտվելու իրադրությունն է, որտեղ էական դեր է խաղում հասցեագրողի կողմից դրական գնահատականի անկեղծությունը՝ արտահայտված գովաբանությամբ կամ կեղծությունը՝ արտահայտված շողոքորթությամբ: Խրախուսական նշանակությամբ խոսողական ակտում գնահատականը իմաստային բաղադրիչ է ու հաղորդակցական նպատակ: Գնահատումը կարող է ունենալ արտակա բնույթ՝ արտահայտվել գնահատողական բառերի գործածությամբ կամ գնահատողական իմաստների իրացմամբ, ինչպես նաև լինել թաքնված՝ ներակա կերպով պարունակվել ասույթներում և ընկալվել ենթագիտակցաբար:

2. Խրախուսական դիսկուրսը արտահայտում է գրուցակիցների փոխազդեցությունը (մտադրությունն ու արձագանքը) և դառնում հաղորդակցվողների միջև որոշակի հարաբերությունների հաստատման միջոց: Խրախուսանքը նպատակային փոխազդեցություն է միջանձնյա շփման մեջ համոզման, փաստարկների և ֆիզիկական (ոչ խոսքային) ազդեցության միջոցով:

3. Խրախուսական իրադրությունը մեծապես պայմանավորված է քաղաքավարության սկզբունքի կիրառմամբ, քանի որ քաղաքավարությունը կարևորագույն նախապայման է հաջող հաղորդակցության համար: Խոսողական ակտի իլլոկուտիվ իմաստը էլ ավելի է ուժեղանում դրական երանգ ունեցող հուզական-գնահատողական բառապաշարի գործածությամբ և արտալեզվական գործոնների ազդեցությամբ:

4. «Հաղորդակցական դեր» հասկացությունը բնորոշում է հաղորդակիցների ռազմավարական դիրքորոշումը շփման մեջ, որի միջոցով խոսընկերները լուծում են շփման գլխավոր խնդիրները: Խրախուսողի համար հատկանշական է նախաձեռնողական դիրքորոշումը, որը խրախուսական իրադրությունում դրսևորվում է դրական հուզականության արտահայտմամբ: Ըստ հաղորդակցական մտադրության՝ հաղորդակիցը կառուցում է իր խոսքի ռազմավարությունը և ընտրում խոսողական ակտերի գործածման որոշակի մարտավարություն: Կոնկրետ հասցեատիրոջ հարցում կողմնորոշումը ավելի որոշակի է դարձնում խրախուսողի խոսքային ռազմավարությունը: Խրախուսական իրադրությունում կարևորվում է հասցեատիրոջ դերը՝ որպես հասցեագրողի խոսողական ակտերի մեկնաբանող: Խրախուսվողը ելնում է խրախուսման ընդունման կամ չընդունման պահանջից: Իր դիրքորոշումը նա իրականացնում է կոնկրետ մարտավարությամբ, որը պայմանավորված է հաղորդակցվողների սոցիալական կարգավիճակով, տարիքով, սեռով:

5. Խրախուսական նշանակությամբ խոսողական ակտերում առանձնահատուկ կարևորություն ունի խոսողների դերային կարգավիճակները: Իմանալով միմյանց հոգեբանական բնութագրերը՝ գրուցակիցները կառուցում են իրենց հաղորդակցական ռազմավարությունը, որը ապահովում է մտադրությունների իրականացման լավագույն արդյունքներ:

6. Խրախուսական դիսկուրսում խոսողի իլլուկուտիվ մտադրությունը պերլուկուտիվ ազդեցությամբ հաշվարկված մտադրություն է: Խրախուսական նշանակությամբ խոսողական ակտում իլլուկուտիվ նպատակը հասցեագրողի կողմից հասցեատիրոջն իր գործողությունների ու վարքագծի ճշմարտացիությունը ապացուցելն է:

7. Պերլուկուտիվ ազդեցության նպատակաուղղվածությունը նշանակում է հասցեատիրոջ նկատմամբ դրական գնահատողական ազդեցության իրականացում, որը հիմնվում է սոցիալական պայմաններով սահմանվող խոսքային վարքագծի վրա: Խրախուսական նշանակությամբ խոսողական ակտերը բնորոշվում են վառ արտահայտված պերլուկուտիվ ազդեցությամբ:

8. Խրախուսող անձի հաղորդակցական մտադրությունները նրանից պահանջում են գրուցակցի վրա դրական խոսքային ազդեցության ուժեղացում: Դա ձեռք է բերվում. ա) դրական քաղաքավարության ռազմավարությամբ, որն արտահայտվում է քաղաքավարության բացահայտ ցուցիչների և քաղաքավարությունն ուժեղացնող միջոցների օգնությամբ, բ) դրական գնահատականով արտահայտչական ասույթների գործածմամբ, գ) գերքաղաքավարությամբ, որը դրսևորվում է գրուցակցի հանդեպ մեծ հարգանքի արտահայտությամբ, իսկ երբեմն նաև սեփական «ես»-ի նվաստացմամբ: Քաղաքավարության կարգը, որը լեզվում պայմաններ է ապահովում շփման բարեհաջող ընթացքի համար, խրախուսական իրադրությունում ներկայացվում է որպես անկեղծ քաղաքավարություն (գովաբանություն) կամ որպես կեղծ՝ վարքագծային քաղաքավարություն (շողոքորթություն):

9. Փաստական նյութի վերլուծությամբ ակնհայտ է դառնում, որ գովաբանություն արտահայտող ակտերի շարքում գովեստի խոսողական ակտը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իր արտահայտչականությամբ: Այն ներակա-պերֆորմատիվ ասույթներ պարունակող ակտ է, որն արտահայտում է խոսողի անկեղծ դրական գնահատականը: Ընդ որում կախված հաղորդակիցների դերակարգավիճակային բնութագրից (բարձր, հավասար, ցածր)՝ գովեստի իրականացման հաղորդակցական իրադրությունները տարբեր են:

10. Գովեստի պերլուկուտիվ ազդեցությունն է համարվում գնահատման օբյեկտի հեղինակություն և առաջնայնության անշահախնդիր հաստատումը և դրանով վերջինիս հուզական վիճակի բարելավումը, իսկ ինքնագովեստի պերլուկուտիվ ազդեցությունն է ինքնահաստատման փորձը, որը որոշակի հույզեր է առաջացնում գրուցակցի մեջ (համակրանք, ուրախություն, նախանձ կամ խղճահարություն):

11. Գովեստի արձագանքները ներկայացված են երկու հիմնական տեսակներով. պատասխաններ, որոնք չեն փոխանցում գովաբանության օբյեկտի վերաբերմունքը խոսողի անկեղծության հանդեպ, և պատասխաններ, որոնք արտացոլում են օբյեկտի որոշակի հուզական տրամադրվածությունը իր հասցեին գովաբանություն ստանալու համար: Այս պատասխան արձագանքները աշխատանքում բնութագրվում են որպես դրական, կեղծ բացասական և բացասական: Ինքնահաստատման իրադրությունում խոսողն ինքն է ստեղծում

իր հասցեին խրախուսանք ստանալու հնարավորությունը, որը ներկայանում է հաճոյախոսության առիթ ստեղծող արտահայտությունների, իր արարքների կամ որակների մասին հարցման տեսքով: Ուրիշ խոսքով՝ գովաբանությունը նա բնականաբար ընդունում է (արծագանքները դրական են):

12. Շողոքորթություն արտահայտող խոսողական ակտերը նույնպես արտահայտչական, ներակա-պերֆորմատիվ ասույթներ պարունակող ակտեր են, որոնք արտահայտում են կեղծ դրական գնահատում և բնութագրվում են կատարման ժամանակ խոսողի շահադիտական շարժառիթների և նպատակների գործաբանական քողարկվածությամբ (շողոքորթության կողավորում անկեղծ գովաբանության ներքո): Այստեղ նույնպես որոշիչ են հաղորդակցվողների դերակարգավիճակային բնութագրերը (ավելի հաճախ՝ ցածր և հավասար, հազվադեպ՝ բարձր):

Հաղորդակցվողների դերակարգավիճակային բնութագրերի տարբերությունը ենթադրում է արտահայտման տարբեր բառային և շարահյուսական միջոցների կիրառություն: Շողոքորթության խոսողական ակտի ներակա-պերֆորմատիվությունը ենթադրում է նրա կառուցվածքում պերֆորմատիվ բայի բացակայություն:

13. Շողոքորթության պերլոկուտիվ ազդեցությունը խոսողի կողմից խոսակցին՝ շողոքորթության օբյեկտին, իր հանդեպ դրական տրամադրելու, նրան հաճույք պատճառելու, իր «անկեղծության» մեջ համոզելու, և այդ բարենպաստ հուզական հիմքի վրա շահադիտական (նյութական կամ բարոյական) օգուտ ստանալու մտադրությունն է:

14. Գովաբանությունն ու շողոքորթությունն ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերակիչ հատկանիշներ (իմաստային-գործաբանական, բառային-շարահյուսական): Ուսումնասիրվող խրախուսական նշանակությամբ խոսողական ակտերի համար ընդհանուր են դրանց բնութագրումները՝ որպես վարքագծային խոսողական ակտեր, որոնք խոսողի կողմից օբյեկտին փոխանցում են հուզարտահայտչական գնահատական: Թե՛ գովաբանությունը, թե՛ շողոքորթությունը կարող են արտահայտվել հաճոյախոսության, կենացի, շնորհավորանքի, հիացմունքի և հավանության միջոցով:

Եթե գովաբանությանը ավելի շատ բնորոշ են կարճ, պարզ համառոտ և զեղչված նախադասությունները, ապա շողոքորթության համար բնութագրական են ընդարձակ, բարդ նախադասությունները, համեմատական կառույցները: Ի տարբերություն գովաբանության արտահայտման միջոցների՝ շողոքորթության արտահայտման միջոցները բնութագրվում են զգալիորեն ավելի մեծ արտահայտչականությամբ ու հուզականությամբ: Շողոքորթողին բնորոշ են բազմաբառությունը, բանաստեղծական ոճի տարրերի օգտագործումը, որոնք ուղղված են շողոքորթողի նպատակների իրականացմանը:

Որպես խրախուսանքի արտահայտման ոչ խոսքային կարևոր միջոց՝ օգտագործվում է ժպիտը, սակայն շողոքորթության դեպքում, ի տարբերություն գովաբանության, այն լինում է կեղծ և արհեստական: Կարող են օգտագործվել ձեռքի տարբեր շարժումները, դիմախաղը և այլն:

Այսպիսով՝ գովաբանություն և շողորթություն արտահայտող խոսողական ակտերը կարող են ներկայացվել որպես վարքագծային, արտահայտչական ակտեր, որոնք համապատասխանաբար դրական և բացասական են գնահատվում հասարակության կողմից: Ուսենալով ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերակիչ հատկանիշներ՝ ուսումնասիրվող ակտերը գործում են որոշակի իրադրային պայմանների համատեքստում՝ արտահայտելով անկեղծ կամ կեղծ դրական գնահատական կոնկրետ ակտերի օգնությամբ, իսկ նրանց խոսքային և ոչ խոսքային դրսևորման առանձնահատկությունները մշտապես հիմնավորված են և պայմանավորված հաղորդակցության նպատակով:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Praise as a Means of Expressing Encouragement, “Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge”, Second International Conference Programme and Abstracts, Yerevan, Yerevan State University, 2007, p.78
2. Խրախուսանքի արտահայտման միջոցները և նրանց գործաբանական ու քերականական առանձնահատկությունները // Օտար լեզուները Հայաստանում, թիվ 2, Երևան, ԿԱԻ հրատ., 2008, էջ 27-36:
3. Խրախուսանքի արտահայտման ոչ խոսքային միջոցները և նրանց նշանակությունը տարբեր մշակույթներում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, թիվ 10, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 150-159:
4. Smile as a Non-verbal Means of Encouragement, “Language, Literature & Art in Cross-cultural Contexts”, Third International Conference Programme and Abstracts, Yerevan, Yerevan State University, 2011, p. 58-59.
5. Smile in Different Cultures // Ակունք, թիվ 2, գիտ. հոդ. ժող., Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 114-124:
6. Compliments and Compliment Responses in Different Cultures // Աստղիկ, թիվ 22-23, Երևան, Սահակ Պարթև, 2012-2013, էջ 203-212:
7. Կիսաներակա գնահատողական խոսողական ակտեր // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, թիվ 15, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 37-44:
8. Բարեմադթանք-կենացը որպես խրախուսանքի արտահայտման միջոց // Աստղիկ, թիվ 24, Երևան, Սահակ Պարթև, 2013-2014, էջ 337-343:
9. Հաճոյախոսությունը որպես անկեղծ դրական կամ կեղծ դրական գնահատման դրսևորում // Ակունք, թիվ 3 (9), գիտ. հոդ. ժող., Երևան, ԵՊՀ հրատ. 2014, էջ 128-137:

ГАСПАРЯН НАРИНЕ АЛЬБЕРТОВНА

**СТРУКТУРНО-ПРАГМАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ДИСКУРСА
ПООЩРЕНИЯ В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ**

**Диссертация на соискание ученой степени
кандидата филологических наук
по специальности 10.02.07 – “Германские языки”**

Защита диссертации состоится 10-го сентября 2014г. в 11:00 на заседании специализированного совета 009 – “Иностранные языки” ВАК РА при Ереванском государственном университете.

Резюме

Диссертация посвящена изучению прагматических особенностей дискурса поощрения в английском языке. Речевые акты со значением поощрения относятся к числу экспрессивных речевых актов, поскольку выделяются выразительностью, эмоциональностью и выражают объективную или субъективную оценку говорящего.

Цель речевых актов со значением поощрения – побудить собеседника к совершению определенных действий через адекватное восприятие намерения говорящего. Особенность данных речевых актов заключается в том, что они могут быть выражены стереотипными и нестереотипными высказываниями с преднамеренным значением. Их основная коммуникативная функция – воодушевить собеседника, подбодрить, поощрить его, совершая по отношению к нему ритуальный акт вежливости. Данные высказывания имеют единую коммуникативную цель – “спровоцировать” положительную реакцию собеседника (адресата) на высказывание говорящего (адресанта). Речевые акты со значением поощрения проявляются на двух уровнях: речевом (вербальном) и неречевом (невербальном). Поощрение понимается как проявление перлокуционного акта, который осуществляется с помощью различных иллокутивных актов. Его эффективная реализация обусловлена рядом интралингвистических и экстралингвистических факторов.

Предметом исследования являются дискурсы поощрения с его минимальными элементами – речевыми актами, коммуникативное намерение в ситуации поощрения, сопровождаемое перлокутивным воздействием, а также семантико-прагматические, лексико-синтаксические характеристики речевых и неречевых единиц, которые реализуют данные намерения.

Цель работы – выявить особенности речевого акта поощрения в английском языке, определить какие речевые и неречевые средства выражения используются участниками коммуникации при поощрении, осуществить семантико-

прагматический, а также лексико-синтаксический анализ, через описание коммуникативного намерения говорящего в дискурсе поощрения в его минимальных единицах – речевых актах.

Актуальность работы обусловлена тем, что в человеческих взаимоотношениях роль поощрения весьма велика, и возникает потребность изучения средств его выражения в языке. Актуальность диссертации состоит также в необходимости нового подхода к исследованию мотивов иллокутивных речевых актов и описанию их коммуникативных целей и перлокутивного воздействия.

Научная новизна работы заключается в том, что в ней впервые делается попытка анализа лингвопрагматических особенностей дискурса поощрения в английском языке. Новым является также и то, что речевые акты, выражающие поощрение, рассматриваются в работе как экспрессивные и поведенческие акты, в которых присутствуют оценочные элементы.

Теоретическая значимость работы состоит в том, что проведенное исследование и полученные результаты могут способствовать развитию теории дискурса, углублению коммуникативных, семантико-прагматических исследований речевых актов и обогатить общую теорию речевых актов. В исследовании подчеркивается роль человеческого фактора в языке, с учетом социально-индивидуального опыта говорящего, его ролевой и статусной характеристики.

Практическая значимость исследования обусловлена тем, что его результаты могут успешно применяться в сфере лингвопрагматики. Материалы работы и его результаты могут быть использованы в психологических тестах, играх, внести определенный вклад в обеспечение успешной коммуникации между различными слоями общества, а также позволят разработать тактические планы для того, чтобы сделать речевое взаимодействие более эффективным.

Narine Gasparyan

STRUCTURAL AND PRAGMATIC PECULIARITIES OF ENCOURAGEMENT DISCOURSE IN MODERN ENGLISH

SUMMARY

The present research is devoted to the study of structural-pragmatic peculiarities of encouragement discourse in Modern English. Speech acts with encouraging meaning are classified among expressive speech acts and convey the speaker's objective and subjective evaluation. The aim of these acts is to encourage the speaker to commit certain actions and get the listener to perceive the intention of the speaker. Encouragement is seen as perlocutionary act performed with the help of various illocutionary acts. Its effective fulfillment depends on both intralinguistic and extralinguistic factors. The main communicative function of speech acts is to inspire the listener with a ritual act of courtesy. These utterances have one common communicative intention – to arouse the listener's positive reaction. Speech acts with encouraging meaning are realized at two levels – verbal and non-verbal.

The **focus** of the study is encouragement discourse with its ultimate units of speech acts.

The **aim** of the research is to discover how encouragement is displayed in speech, what verbal and non-verbal means of expression are applied by the interlocutors for encouragement. The paper also aims at carrying out semantic-pragmatic, lexical-syntactic analysis of the above mentioned means and revealing the communicative intention of encouragement in speech acts expressing praise and flattery.

The **topicality** of the research is attributed to the fact that encouragement and its role is of vital importance in interpersonal communication and it becomes necessary to analyse its means of expression and actualization in language. The relevance is also explained by the necessity of developing a new approach to fill the existing gap in previous pragmatic research, particularly in the description of motives and intentions of the mentioned speech acts and their perlocutionary effect.

The **novelty** of the research is determined by the fact that for the first time an attempt is made to analyse pragmatic peculiarities of encouragement discourse, to carry out comprehensive study of speech acts with encouraging meaning based

on the English linguistic facts. These speech acts are presented in the work as expressive and behavioural acts which possess positive evaluation elements.

The research is of **theoretical significance**. The results obtained will contribute to the theory of discourse, the theory of speech acts and will expand the study on communicative, semantic-pragmatic peculiarities of speech acts. Special attention is paid to the role of human factor in language, as well as to the speaker's social and individual experience, his status and communicative role.

The **practical value** of the research is provided by the fact that the results of the study will enable psychologists, sociolinguists and teachers to use them in psychological tests and games. The main findings of the thesis can be used in theoretical and practical courses on semantics, pragmatics, discourse analysis and can be useful in teaching English as a second language. The results and conclusions can be useful in establishing interpersonal relations in communication, as well as in providing successful communication between different layers of society and developing strategies for making speech interaction more effective.

A handwritten signature in blue ink, consisting of several fluid, connected strokes that form a stylized name or set of initials.

